



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորումը նախադպրոցական տարիքում»

Դաստիարակ՝ Լուսինե Մարտիրոսյան

Մանկապարտեզ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի թիվ 3 «Հեքիաթ»» ՀՈԱԿ

2022թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	2
ԳԼՈՒԽ 1. ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ-----	4
1.1. Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքի կազմակերպման ձևերն ու տեսակները մանկապարտեզում-----	4
1.2. Տարրական մաթեմատիկական պատկերացումների ուուցման մեթոդները և ներկայացվող պահանջները մանկապարտեզում-----	6
1.3. Դիդակտիկ խաղերի դերը տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման գործում-----	7
ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ -----	13
2.1. Արձանագրող փուլ	
2.2. Ձևավորող փուլ	
2.3. Պարապմունքի պլան	
2.4. Դիտորդների դիտարկումներ	
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ-----	14
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----	15

## Ներածություն

<<Յուրաքանչյուր բնական գիտություն պարունակում է այնքան ճշմարտություն,  
որքան նրանում մաթեմատիկա կա>>

Էմանուիլ Կանտ

Նախադպրոցականի ինտելեկտուալ, մտավոր, իմացական զարգացման համար կարևորագույն միջոց է տարրական մաթեմատիկական պատկերացումների ուսումնասիրությունը մանկապարտեզում, որի ժամանակ երեխաներին հաղորդվում է գիտելիքների որոշակի պաշար: Արդի պայմաններում մաթեմատիկայի ուսուցումը օրավուր ձեռք է բերում մեծ նշանակություն: Դա բացատրվում է ամենից առաջ մաթեմատիկա գիտության զարգացմամբ և գիտելիքների տարբեր բնագավառների նրա ներթափանցմամբ:

Մանկապարտեզում տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորումը նպատակաուղղված է երեխաներին դաստիարակելու շրջակա իրականությանը տրամաբանորեն լիարժեք փաստարկելու, պատճառաբանելու կարողությամբ, սովորույթով: Ոչինչ այնպես չի նպաստում երեխայի տրամաբանական մտածողության զարգացմանը, ինչպես մաթեմատիկան: Մաթեմատիկայի բացառիկ դերը առաջին հերթին նրանով է բացատրվում, որ այն նախադպրոցական ուսուցման համակարգում ամենատեսական գիտությունն է, որ ուսումնասիրվում է մանկապարտեզում: Մտածողության մաթեմատիկական ոճին բնորոշ են մտքի հստակությունը, համառոտությունը, ճշգրտությունը, սիմվոլիկայից օգտվելու կարողությունը: Այս առնչությամբ սիստեմատիկ ձևով վերակառուցվում են տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման բովանդակությունը մանկապարտեզում:

### Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- Զարգացնել մինչթվային պատկերացումների իմացությունը՝ որպես մաթեմատիկական գիտելիքների հիմք
- Հաշվի, չափման, հաշվարկման, մոդելավորման, տարրական մաթեմատիկական գործողությունների, գործնական կարողությունների և հմտությունների զարգացում
- Գիտելիքների ամրակայում թվի (1-10), թվանշանի, մեծության, ձևի, շրջակա իրականության վերաբերյալ տարածական, ժամանակային

- հարաբերությունների տարրական կողմնորոշման ձևավորում
- Մաթեմատիկական հասկացությունների յուրացում, տիրապետում, ճանաչողական հետաքրքրությունների, ընդունակությունների, տրամաբանական մտածողության, արագ կողմնորոշվելու կարողության զարգացում
  - Երկրաչափական պատկերների և մարմինների տաբերակում, համադրում և վերլուծում:

**Օգտակարություն** – Հետազոտական այս աշխատանքը կարող է փորձի փոխանակման միջոց հանդիսանալ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար:

Աշխատանքը բաղկացած է 2 գլխից, եզրակացությունից, առաջարկությունից, օգտագործված գրականության ցանկից:

Համակարգչային շարվածքով կազմում է 16 տպագրական էջ:

**ԳԼՈՒԽ 1. ՏԱՐԲԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ  
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ**

**1.1. Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման ուղղությամբ  
տարվող աշխատանքի կազմակերպման ձևերն ու տեսակները  
մանկապարտեզում**

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորումն ու զարգացումն իրականացվում են պարապմունքների և խաղերի օգնությամբ: Պարապմունքները տարվում են 2 ձևով՝

**Համընդհանուր** (Ֆրոնտալ ուսուցում, որը հիմնականում կատարվում է նոր նյութի հաղորդման ժամանակ),

**Մի քանի պարապմունքների միասնացման ճանապարհով**, օրինակ՝ մաթեմատիկա-խոսքի զարգացում, մաթեմատիկա-երաժշտություն, մաթեմատիկա-կերպարվեստ, կառուցողական աշխատանք: Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում մաթեմատիկական որոշակի գիտելիքների և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորությամբ յուրացվում և ամրապնդվում են տարբեր մաթեմատիկական խաղերի, մեծերի ու հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման, ինքնուրույն գործունեության ընթացքում: Մաթեմատիկայի պարապմունքի տեսակներն են՝

**Ավանդական** - <<Ուսուցում>>, <<Խորացում>>, <<Խառը>> և <<Ամփոփիչ>>,

**Պարապմունք** – ուսուցումը նվիրվում է նոր նյութի հաղորդմանն ու ամրապնդմանը: Այս պարապմունքի միջոցով դաստիարակի հիմնական խնդիրը նոր նյութի հաղորդումն է, որի ընթացքում նա լինում է առավել ակտիվ: Այս տիպի պարապմունքների ժամանակ երեխաների գործունեության արդյունավետ ձևը խաղն է: Դրանք կարելի է սկսել տվյալ թեմային վերաբերող քառյակով, հանելուկով կամ ոտնավորով:

Մանկապարտեզում քիչ են օգտագործվում զուտ ուսուցողական պարապմունքները /յուրաքանչյուր խմբում մեկ պարապմունք/: Ուսուցում-պարապմունքի ժամանակ օգտվում ենք երեխաների **մտավոր ակտիվացման** 2 ձևից՝

**Անհատական**, երբ հարցն ուղղում ենք բոլորին, բայց պատասխանը պահանջում մեկից.

**Ընդհանուր**, երբ հարցն ուղղվում է բոլորին և պատասխանը պահանջվում է բոլորից:

**Պարապմունք-խորացում**, գործնական և ճանաչողական խնդիրների օգնությամբ համեմատության միջոցով ամրապնդվում են մաթեմատիկական հասկացությունները: <<Ո՞վ կհիշի...>> հարցին վերաբերող գործնական, խաղային վարժությունների օգնությամբ ստեղծվում են պայմաններ՝ հաղթահարելու

մաթեմատիկական հասկացությունների վերաբերյալ դժվարությունները: Օրինակ ծագում են թվի ուսուցման հետ կապված հետևյալ **դժվարությունները**. Հաշվելուց հետո չեն ընդհանրացնում թիվը և չեն պատասխանում՝ <<ո՞րքան է>> հարցին: Վերջին անվանված թիվը չեն վերագրում հաշված առարկաների ողջ խմբի անվանը. 1.2.3. ընդհամենը՝ 3 սունկ, այլ վերջին ավելացրած առարկային՝ 3-րդ սնկին. Նույն առարկան հաշվում են կրկնակի կամ բաց են թողնում (հետևել, որ երեխան մինչև առարկան չդնի մյուս առարկայի կողքին, թիվը չասի):

Յուրաքանչյուր ծրագրային նյութի խորացման և ամրապնդման լավագույն միջոցներն են.

- **Հանձնարարություններ** որոնք կատարվում են ասված թվի և օրինակի համաձայն,
- Կոնկրետ զգայարանները (լսողություն, շոշափելի շարժում),
- Մաթեմատիկական խաղեր և հաճախակի փոփոխվող բազմատեսակ դիդակտիկ նյութեր,
- Մանկական գրականությունը,
- Մաթեմատիկական բովանդակությամբ հանելուկներ:

**Խառը տիպի պարապմունք:** Սա ստեղծագործական բնույթի պարապմունք է: Այն պրակտիկայում ամենատարածվածն է: Այս պարապմունքներն իրենց մեջ ընդգրկում են ինչպես ուսուցման, այնպես էլ խորացման տարրեր: Կարելի է անցկացնել 3 տարիքային խմբերում էլ:

Պարապմունքի այս տեսակի ընթացքում պարտադիր է կիրառել գործնական աշխատանք: Այն ներառում է նույնատիպ, բայց աստիճանաբար բարդացող վարժություններ, որոնք ընդլայնում են տարրական մաթեմատիկայի ծրագրի 5 բաժիններին վերաբերող պատկերացումները: Խառը տիպի պարապմունքին բնորոշ է **գործնական աշխատանքը**, որի նպատակն է մաթեմատիկական հասկացությունների, հմտությունների և ունակությունների գործնական յուրացումը:

Ուսուցման **ոչ ավանդական**՝ ժամանակակից ձևերն են՝

Մաթեմատիկական բովանդակությամբ թատերականացված խաղ-պարապմունքներ,

Խաղ – ճանապարհորդություններ, էքսկուրսիաներ,

Ուրախների և հնարամիտների մրցույթներ, զվարճալիքներ,

Մաթեմատիկական բնույթի տոներ և զվարճալիքներ,

Առօրյա մանկական գործունեությունը՝ կենցաղային, խաղային, աշխատանքային, կառուցողական,

Արվեստի ձևերի ներգործությունը,

Մաթեմատիկական բովանդակության տեսագրեր և սկավառակներ:

Մաթեմատիկայի ուսուցման նշված բոլոր ձևերն էլ կյանքի են կոչվում ժամանակակից դիդակտիկայի հիմնական կարգախոսը, այն է՝ <<Մովորեցնել սովորել>>:

## **ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐՆ ԵՆ.**

- Ցուցադրական նյութերով խմբակային աշխատանք
- Երեխաների անհատական աշխատանք՝ բաշխիչ նյութերով
- Աշխատանք տարբեր խաղերով
- Պարապմունքի ընթացքում գուգահեռաբառ աշխատանք է տարվում նաև ծրագրի մյուս բաժիններից՝ պահպանելով օրգանական կապ՝ դրանց միջև ապահովելով մոտավոր ծանրաբեռնվածության բաշխումը:

### **1.2. Տարրական մաթեմատիկական պատկերացումների ուսուցման մեթոդներն ու ներկայացվող պահանջները մանկապարտեզում**

Ծրագրի արդյունավետ իրականացումն առնչվում է խմբում կազմակերպված զարգացնող միջավայրի և ուսուցման մեթոդների կիրառմանը: Ուսումնական գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմաթիվ մեթոդներ: Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր 2 խումբ են կազմում՝ ավանդական և ժամանակակից.

#### **Ավանդական**

- Դիտողական մեթոդ. Գիտելիքը ձեռք է բերվում դիտողականության շնորհիվ
- Գործնական մեթոդ. գիտելիքը գործնական փորձի արդյունք է
- Խոսքային, գիտելիքի աղբյուրը խոսքն է

**Ժամանակակից** մեթոդների հիմքում ընկած է գիտելիքի ձեռքբերման գործընթացում երեխայի անմիջական մասնակցությունը: Այս ասպարեզում առանձնացվում են.

- Խաղային մեթոդ
- Դիդակտիկ նյութերի շնչավորման մեթոդ (մաթեմատիկական բովանդակությամբ նյութի թատերականացում)
- Մտազրոհի մեթոդ
- Մոդելավորման մեթոդ (երբ իրական առարկաները փոխարինվում են երկրաչափական պատկերներով. Օրինակ՝ սեղանը՝ շրջանով, բազմոցը՝ ուղղանկյուններով)

- Ակտիվ ուսուցման մեթոդները: Վերջիններս հայտնի են որպես փոխներգործուն (ինտերակտիվ) և Համագործակցային մեթոդներ: Դրանք ներառում են զույգերով և խմբով մտավոր աշխատանք՝ ուղղված համատեղ որոնումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացման ու իրագործմանը:
- Ուսուցման գործնական մեթոդներ, որոնց խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերն ու մոդելավորումը:

Նշված բոլոր մեթոդներն էլ խթանում են երեխաների մտային գործունեությունը, մղում ավելին անելու և դրանով նպաստում նրանց մաթեմատիկական հետաքրքրությունների, ընդունակությունների զարգացմանը, ինքնավստահության կայացմանը, հնարավորությունների լիարժեք բացահայտմանն ու իրացմանը:

### **Մաթեմատիկական պարապմունքներին ներկայացվող պահանջները**

- Իմանալ երեխաների տարիքային և անհատական զարգացման առանձնահատկությունները:
- Ապահովել երեխաների ստեղծագործական մտածողության ձևավորման արդյունավետ նախադրյալները՝ կերպարային, վերացական պատկերացումները:
- Ձևավորել դրական վերաբերմունք և հետաքրքրություն մաթեմատիկայի նկատմամբ:
- Չարգացնող միջավայր ստեղծել նախասիրությունների և ձեռներեցության զարգացման համար:
- Նպաստել բնածին հարցասիրության զարգացմանը:
- Նախապատրաստել դպրոցին:

### **1.3. Դիդակտիկ խաղերի դերը տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման գործում**

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման լավագույն միջոց են համարվում դիդակտիկ խաղերը: Դրանք համարվում են երեխայի՝ իր իսկ ուսուցման և դաստիարակման համակարգաստեղծ բաղկացուցիչների մի մասը: Դիդակտիկ խաղերի բովանդակությունը միշտ որևէ մտավոր խնդրի իրականացումն է, ուստի և դրանք հիմնականում անց են կացվում դաստիարակի ղեկավարությամբ՝ հստակ կազմակերպված պարապմունքի միջոցով:

Մաթեմատիկական դիդակտիկ խաղերի գործընթացը դաստիարակի կողմից դիտարկվում է որպես երեխայի վարքի փորձառության հավաքագրման, կշռադատման ընդհանրական միջոց, նրա բարոյական և սոցիալական ձգտումների հիմնական բաղկացուցիչների ձևավորում: Դիդակտիկ խաղերն ունեն խնդիր,



գործողություն, հստակ կանոններ, որոնց կատարումը պարտադիր է երեխաների համար և արդյունք: Յուրաքանչյուր դիդակտիկ խաղում կա ճիշտ սահմանված խնդիր, որը ենթարկվում է դիդակտիկական նպատակին, սակայն հիմնականը ուսուցողական խնդիրն է, որի լուծման համար երեխան պետք է արագ մտածի, համեմատի առարկաները, երևույթները, վերլուծի, համադրի դրանք և ինքնուրույն որոշ եզրակացության հանգի: Սակայն երեխային հետաքրքրողը ոչ թե դիդակտիկ խաղի ուսուցողական խնդիրն է, որը նա տվյալ դեպքում չի էլ գիտակցում, այլ նրա խաղային կողմը, նպատակին շուտ և ճիշտ հասնելը, իսկ ուսուցողական խնդիրը լուծվում է անկախ նրա կամքից ու գիտակցությունից: Սա է դիդակտիկ խաղի ամենամեծ առավելությունը: Խաղի ընթացքում տիրապետող է զգայական այնպիսի մթնոլորտ, որը նպաստում է երեխաների ապրումակցային խառնվածքի, այն է՝ ուշադրության, նրբազգացության, հոգատարության, պատրաստակամության, բարյացակամության, արդարացիության ձևավորման: Դիդակտիկ խաղերը դառնում են գործուն սուբյեկտ, նպաստում անվստահ, կախյալ, վախկոտ երեխաների անհատական աճին ու զարգացմանը:

Մաթեմատիկական դիդակտիկ խաղերը մանկապարտեզային խմբերում կիրառվում են պլանավորված ձևով և այդ պատճառով էլ դառնում են դաստիարակության և ուսուցման կարևոր օղակներից մեկը:

Մաթեմատիկայի պարապմունքի ընթացքում դիդակտիկ խաղերը կարող են կիրառվել տարբեր նպատակներով.

- Նոր գիտելիքների հաղորդման միջոց
- Գիտելիքների ստուգման միջոց
- Պրակտիկ գործունեություն
- Ճանաչողական գործունեության ակտիվացման միջոց
- Անհատական գործունեություն

Դիդակտիկ խաղերի դաստիարակչական նշանակությանը նախ և առաջ նրանց բովանդակության մեջ է: Խաղալիս երեխան գիտակցաբար ենթարկվում է խաղի կանոնների և ձեռք է բերում ինքնատիրապետում, ինքնավերահսկում սեփական գործողությունների և հավատ իր ուժերի նկատմամբ: Մաթեմատիկական դիդակտիկ խաղերը նպաստում են ինչպես երեխաների մտավոր գործողությունների ընդհանրացման, համեմատման և դասակարգման զարգացմանը, այնպես էլ մաթեմատիկական պատկերացումների ընդլայնմանն ու ամրապնդմանը:

Մաթեմատիկական դիդակտիկ խաղերը բաժանվում են 2 խմբի

1. **Առարկաներով խաղեր**, որոնք նպաստում են մաթեմատիկական տարբեր հասկացությունների ամրապնդմանն ու յուրացմանը: Դրանցից են՝

- Քանակական հասկացություններն ամրապնդող (<<Թվանշանների ամրոցում>>, <<Խաղալիքների խանութում>>, մաթեմատիկական բովանդակությամբ սյուժետադերային՝ <<Խանութ>>, <<Կրկես>>...) և երաժշտամաթեմատիկական խաղերը
- Առարկայի մեծության հատկանիշներն ամրապնդող խաղերը՝ <<Ո՞վ ավելի արագ>>, <<Ո՞վ է առաջինը>>
- Երկրաչափական ձևերն ամրապնդող խաղերը՝ <<Ծիծաղաշարժ տիկնիկներ>>, <<Խոհանոցում >>, <<Ծննդյան տորթ >> և այլն
- Տարածական հասկացություններն ամրապնդող խաղերը՝ <<Ով առաջինը կանցնի լաբիրինթոսը>>, <<Կարմիր գլխարկը>>, <<Պահմտոցի>>
- Ժամանակը ցույց տվող խաղեր՝ <<Այդ ե՞րբ է լինում>>, <<Մեր օրը>>, <<Տարվա եղանակներ>>
- Երաժշտամաթեմատիկական, մաթեմատիկական բովանդակությամբ սյուժետային խաղերը՝ <<Խանութ>>, <<Կենդանաբանական այգի>> և այլն

2. **Բանավոր խոսքը զարգացնող խաղեր**՝ <<Ասա՛ հակառակը>>, <<Լրացրո՛ւ նախադասությունը>> և այլն

Նպատակահարմար է նշված դիդակտիկ խաղերը ներկայացնել հեքիաթների հերոսների՝ Գիտունիկի, Ինչուիկի կամ երեխաներին քաջ ծանոթ Կարմիր Գլխարկի, Մպիտակաձյունիկի կողմից:

**Մաթեմատիկական դիդակտիկ խաղերի կազմակերպման նորացման ուղիներն են .**

- Փոխել դաստիարակի կողմնորոշումը՝ խաղը վարելու առումով, նա խաղում հանդես է գալիս խաղընկերոջ դերում և այդ կերպ խաղը դառնում է բնական և ինքնաբուխ
- Հաշվի առնել երեխաների տեսակետերն ու կարծիքները, ընդունակությունները, գնահատել նրանց
- Խաղը հազեցնել ժամանակակից պահանջները վեր հանող հանձնարարություններով
- Խաղը ներկայացնել հեքիաթներից մեկի տեսքով

**Մաթեմատիկական դիդակտիկ խաղերին ներկայացվող պահանջները**

- Խաղը պետք է լինի հրապուրիչ և առաջացնի հետաքրքրություն
- Խաղի միջոցով ստեղծվելու է զգացմունքային և զարգացնող միջավայր

- Չի կարելի երեխաներին հանդիմանել՝ առաջադրանքը չհասկանալու կամ չկատարելու համար
- Անհրաժեշտ է առաջացնել խաղին ակտիվ մասնակցելու ցանկություն

### **Երեխաների գործունեության համար անհրաժեշտ նյութերի անվանացանկ**

- Դիդակտիկ խաղալիքներ՝ լոտո, դոմինո նկարներ
- Տարբեր խաղային հավաքածուներ՝ լեզուներ խաղալիքներ
- Խաղեր երեխաների մտավոր զարգացման համար՝ շախմատ, շաշկի
- Կառուցողական խաղեր
- Նկարների հավաքածուներ, սեղանային տպագիր խաղեր
- Ցուցադրական և բաշխիչ նյութեր՝ պլոմետային խաղալիքներ, կոճակներ, խխունջներ, կոներ, երկրաչափական պատկերներ, հաշվեքարտեր, թվանշան և թվաբանական գործողություն պատկերող քարտեր՝  $^{\circ}$ , =, <, >

## **Մաթեմատիկական կարողությունները զարգացնող դիդակտիկ խաղերի օրինակներ**

### **Գուշակի՛ր թիվը**

#### **Նպատակը՝**

Յուրացնել գործողության նշանները (+, -, =) և զարգացնել հաշվելու կարողությունը:

#### **Անհրաժեշտ պարագաներ՝**

Թվանշաններով և գործողության նշաններով քարտեր

#### **Ընթացքը՝**

Երբ խաղը սկսվում է՝ դաստիարակը բոլորի համար տեսանելի տգեղում կախում է թվաքարտեր՝ գումարման կամ հանման նշանով:

Օրինակ՝  $3 + 1 =$   $4 +$   $= 5$

Սկզբում պետք է գուշակեն գումարը, թե ի՞նչ թվաքարտ պետք է կախեն, իսկ հետո՝ գումարելիներից որևէ մեկը: Ավելացումը սկզբում պետք է տալ 1-ով, 2-ով, ապա՝ ցվանկացած թվով:

## Դասավորի՛ր առաջադրված ձևով

### Նպատակը՝

Ամրապնդել երկրաչափական պատկերների իմացությունը :


### Անհրաժեշտ պարագաներ՝

Տարբեր մեծության երկրաչափական պատկերներ սովորաթղթից

### Ընթացքը՝

Սեղանի վրա խառը դրվում են տարբեր մեծության երկրաչափական պատկերներ (յուրաքանչյուրից 5-ական): Խաղացող երեխային դաստիարակը առաջարկում է ընտրել բոլոր քառակուսիները և հավաքապաստառի վրա ձախից դասավորել աճման կարգով: Երեխան պետք է կարողանա սկզբում ձախից դնել ամենափոքր քառակուսին, իսկ վերջում՝ ամենամեծը: Այս խաղը կարելի է անցկացնել կարգային համրանք ամրապնդելու նպատակով ևս:

Օրինակ՝ Դասավորի՛ր 3 շրջան այնպես, որ 3-րդ շրջանը լինի ամենամեծը:



Դասավորի՛ր ձախից 4 ուղղանկյուն, որ առաջինը լինի ամենամեծը, իսկ վերջինը՝ ամենափոքրը:



## Ո՞ր թիվը չկա

### Նպատակը՝

Ամրապնդել թվերի շարքը ստանալու, արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները:

### Անհրաժեշտ պարագաներ՝

Թվաքարտեր և հավաքապաստառ

### Ընթացքը՝

Ցուցադրվում են 1-7 թվերի թվաքարտերը (պայմանական): Դաստիարակը դուրս է հրավիրում երեխաներից մեկին և նրա բացակայությամբ թաքցնում թվաքարտերից մեկը: Երեխան ներս մտնելով՝ պետք է ուշադիր նայի թվաքարտերին և ասի, թե ո՞ր թվաքարտը չկա:

Առաջադրանքը ճիշտ կատարելու դեպքում ծափահարում են, իսկ սխալի դեպքում՝ դուփում ոտքերով:



Ամենակարևորը, խաղը կազմակերպելիս հարկավոր է նկատի ունենալ հետևյալը՝

- Խաղի բովանդակությունը պետք է համապատասխանի երեխաների գիտելիքների մակարդակին
- Պետք է նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը
- Խաղի տևողությունը պետք է լինի չափավոր

Դիդակտիկ խաղերը կազմակերպելուց առաջ, դաստիարակը պետք է այն վերլուծի և ընդհանրացնի:

Խաղի ընթացքում անհրաժեշտ է ապահովել կարգապահություն և արդարամտության մթնոլորտ:

## ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

### 2.1 Արձանագրող փուլ

Հետազոտությունն անց է կացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի թիվ 3 <<Հեքիաթ>> մանկապարտեզի ավագ խմբի 30 սաների հետ:

Արձանագրող փուլի նպատակն է՝ ճշգրտել, երեխաների տարրական մաթեմատիկական գիտելիքների իմացության աստիճանը:

### 2.2 Ձևավորող փուլ

Ձևավորող փուլի նպատակն է՝ ամրապնդել և խորացնել երեխաների տարրական մաթեմատիկական գիտելիքները:

### 2.3 Պարապմունքի պլան

<https://docs.google.com/document/d/14muSmAUUrotxwCTzHmrgruxGVRIL3tOZpl-BuBYTx1M/edit>

### 2.4 Դիտորդների դիտարկումներ

*Դիտորդներ – ԿՄՄ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, տնօրեն, մեթոդիստ, ավագ խմբի դաստիարակ*

Պարապմունքի ընթացքում դաստիարակը և իր սաները քայլ առ քայլ մոտեցան իրենց առջև դրված նպատակին և հետաքրքիր լուծումների ու հնարքների, դիդակտիկ խաղերի և նյութերի կիրառմամբ բացահայտեցին մաթեմատիկայի զարմանահրաշաշխարհը: Դաստիարակը օգտագործելով այլընտրանքային մեթոդներ և սցենարային ինքնատիպ լուծումներ՝ կարողացավ տարրական մաթեմատիկական դարձնել ընկալելի: Երեխաներն իրենց ակտիվությամբ, անկաշկանդ մոտեցումներով մատուցվող թեման դարձրին հետաքրքիր և դյուրին: Որպես ինտերակտիվ պարապմունքի ամփոփում՝ երեխաներն իրենց գիտելիքները ամփոփեցին գործնական աշձատանքով, որի շնորհիվ առավել ամրապնդվեց ու առարկայական դարձավ պարապմունքի

ընթացքում սովորաձև ու ներկայացվածը: Ներկաները նշեցին, որ պարապմունքը իսկապես ուսանելի էր, արդյունավետ և՛ ձևաչափով, և՛ բովանդակությամբ:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

Այսպիսով, մանկապարտեզում տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորումը նպատակաուղղված է հետևյալ խնդիրների իրականացմանը՝

1. Մինչթվային պատկերացումների զարգացում
2. Հաշվի, չափման, հաշվարկման, մոդելավորման, տարրական մաթեմատիկական գործողությունների, գործնական կարողությունների և հմտությունների զարգացում
3. 1-10 թվանշանների, գործողության նշանների իմացություն, թվերի կազմության յուրացում
4. Վարժությունների, կռահման և պարզ խնդիրների լուծում
5. Երկրաչափական պատկերների և մարմինների ճիշտ տարբերակում և համադրում
6. Կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ

## **Առաջարկություն**

Այս թեմայի շրջանակում կցանկանայի, որ հետագա աշխատանքի ընթացքում դաստիարակները ուշադրություն դարձնեն այլընտրանքային մեթոդների կիրառմանը և զարգացնող միջավայրի հարստացմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր /5-6 տարեկան/,  
Երևան 2007,  
Հեղինակ՝ Լ. Մանուկյան, Հ. Միտոյան էջ 84-92
2. Երեխաների տրամաբանական և տարրական մաթեմատիկական  
պատկերացումների զարգացումը, Երևան 2015,  
Հեղինակ՝ Հ. Միտոյան էջ 13-16
3. Դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում, Երևան 2014,  
Հեղինակ՝ Լ. Սմբատյան էջ 143-146
4. Ուրախ մաթեմատիկա մեթոդական ուղեցույց, Երևան 2003  
Հեղինակ՝ Ս. Սարգսյան, էջ 7-27
5. Նյութեր համացանցից  
<https://www.facebook.com/MirasoTrainingCentre/posts/482876449094064/>